ԷՐԵԲՈՒՆԻ ԱՆՎԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Դ. Ն. ՍԱՐԳՍՅԱՆ

Ուրարտագիտությանը հետաքրքրող հարցերից է Արգիշթի I-ի (786—764) կառուցած Էր(ե) բունի (URU Er(e)buni)[1] քաղաք-ամրոցի (այժմ՝ Երևան) անվան բառական իմաստի մեկնաբանությունը։ Այդ մասին Ի. Դյակոնովը հետևյալ կարծիքն է հայտնել. «... Հեղինակը (խոսքը Գ. Մելիքիշվիլու մասին է—Դ. Ս.) կարդում է «Իրպունի» (IR-e-PU-ni), ավելի ճիշտ, թվում է, թե պետք է այստեղ կարդալ Er-bu (-ni), Er-e-bu (-ni)*: Այդ անվան արտասանությունը եղել է, հավանաբար,* *Ervu-, *Er^{a}vu-, *որտեղից էլ, գուցե ժամանակակից (Y)* erevan*Erev (u)-avan"[3]: *Ակներև է, որ Ի. Դյակոնովը Էր (ե) բունի անվան մեջ տեսնում է* *Ervu-, *Er^{a}vu-*արմատը, որը նա չի մեկնաբանում։ Ըստ այդ կարծիքի,* (Er) e buni *տեղանունը Արգիշթի I-ի ժամանակ հնչել է* *Ervu-, *Er^{a}vu-, *այսինքն՝ բառամիջի* "b"-ն *հնչել է որպես* "y", *որը պահպանվել է հետագայում այդ տեղանունից առաջացած Երևան անվան մեջ։ Սակայն Ի. Դյակոնովը Էր (ե) բունի անունից առաջացած Երևան անվան մեջ,* *Ervu-, *Er^{a}vu-*արմատից բացի, տեսնում է նաև—*avan *արմատը, թեև դրա առաջացման հիմքի մասին՝ կապված* Er(e)buni *տեղանվան հետ, ոչինչ չի ասում։*

Մեր կարծիքով Էր (ե) բունի (URU Er(e)buni) տեղանունը մեկնաբանելիս, մասնավորապես բառակազմական վերլուծության ենթարկելիս իրենց վրա ուշադրություն են հրավիրում ուրարտական սեպագիր տեքստերում հիշատակված հետևյալ տեղանունները, այդ թվում՝

*ա/ քաղաքանուններ—*URU Ahiuni, URU Atauni (e), URU Eruni, URU Hulmeruni, URU Irdaniuni, URU Irnuni, URU Ištikuni (u), URU Libliuni, URU Luhiuni, URU Maqaltuni, URU Menabšuni, URU Mušuni, URU Qaduqaniuni, URU Qi/ehuni, URU Qirpununi, URU Ubarugilduni, URU Urieiuni

բ/ երկրանուններ — KUR Adahuni (*հմմտ.* I Adahuni *ցեղանունը*), KUR Aiduni (*հմմտ. ասսուրերեն* KUR Aiadi), KUR Ap/buni, KUR Arquqiuni (*հմմտ.* I Arquqiuni *ցեղանունը*), KUR Azamieruni, KUR Dirguni, KUR Etiuni (*տարբերակ՝* KUR Etiuhi), KUR Irkiuni, KUR Lueruni (u) (*հմմտ.* I Lueruni (u) *ցեղա-*

---

[1] Ц. А. Меликишвили, Урартские клинообразные надписи (*այսուհետև՝* УКН), М., 1960, № 127, II (33), 128, A 2 (15), 138 (4), 145 (2), 146 (1, 2), 147 (1, 2), 147 B (1).

[2] *Մ. Ա. Իսրայելյան, Ուրարտական երկու նոր արձանագրություն (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1951, № 8), էջ 97, ծան. 2։*

[3] И. М. Дьяконов, Древневосточные материалы по истории народов Закавказья (Вестник древней истории (*այսուհետև՝* ВДИ), М., 1956, № 2, с. 62).

նունը), ^{I}Luipruni, ^{KUR}Puzuni(a), ^{KUR}Tariuni, ^{KUR}Uelikuni (տարբերակ՝ ^{KUR}Uelikuhi), ^{KUR}Uhuni, ^{KUR}Ušuiuni, ^{KUR}Ziuquni և այլն[4]։

Ուրարտական այս կարգի տեղանուններ են հիշատակված նաև աքքադական սեպագիր տեքստերում, օրինակ՝ ^{KUR}Abarsiuni, ^{GÈN}Elamuni(հմմտ. ^{KUR}Alamun), ^{GÈN}Miliadruni, ^{KUR}Tunibuni, ^{KUR}Unzamuni և այլն։

Ակներև է, որ հիշատակված անունների կազմության մեջ ընդհանուր է uni-ն, որը անվանակերտ վերջածանց է և ավելացել է այդ տեղանունների արմատների վրա։ Ուրարտերենի այդ-uni անվանակերտ վերջածանցն է ընկած նաև ^{URU}Er(e)buni քաղաք-ամրոցի անվան կազմության մեջ։ Էր(ե)բունիից առաջացած Երևան տեղանվան կազմության մեջ-uni-ն վերածվել է ան-ի, որը հայերենում կատարում է անվանակերտ վերջածանցի դեր, ինչպես-uni-ն ուրարտերենում։ Այս կապակցությամբ ուշագրավ է այն փաստը, որ Էր(ե)բունի>Երևան անցումի նման կան ուրարտական ուրիշ այլ տեղանուններ էլ, որոնց -uni բաղադրիչը հայերենում՝ հանդես է եկել որպես անվանակերտ ածանց։ Այսպես, օրինակ՝ աքքադական սեպագիր արձանագրություններում հիշատակված ուրարտական ^{URU}A-la-mu-un[5] (հմմտ. ^{GEN}E-la-mu-ni[6]) տեղանունից սերել է հայկական Ալման գյուղանունը (Վասպուրականի նահանգի Անձևացիկ գավառում[7])։

Ուրարտերենի այդ-uni վերջածանցը իր արտահայտությունն է գտել վաղ հայկական տոհմանունների և հայերենի «ք» ածանցով նրանցից կազմված գավառանունների մեջ[8]։ Այդպիսի տոհմանուններից և գավառանուններից են՝ Ապահունի (ք), Արծրունի (ք) (հմմտ. ^{URU}Arşuni(uinie)][9], Արշամունի(ք), Արշարունի (ք), Բզնունի (ք), Բոգունի (ք), Բուժունի (ք), Գեղաքունի (ք) (հմմտ. ^{KUR}Uelikuni)[10], Գնունի (ք) (հմմտ. ^{KUR}Qanlun)[11], Երվանդունի(ք), Խորխոռունի (ք), Կարթունի (ք), Կրճունի (ք), Հավնունի (ք) (հմմտ. ^{KUR}Abuni)[12], Մեծանի (ք), Շահունի (ք) (հմմտ. ^{I}Šahuhi=*Šahuni)[13], Պալունի (ք),

4 Բառական նման կառուցվածք ունեն նաև ուրարտական որոշ անձնանունները, դիցանունները և գետանունները, օրինակ՝ ^{I}Murinuni, ^{I}Rašuni, ^{D}Zi(u)quni(e), ^{ID}Ildaruni և այլն։

5 E. A. W. Budge and L. W King, Annals of the Kings of Assyria (այսուհետև՝ AKA), I, London, 1902), p. 60, col. IV, line 16; И. М. Дьяконов, Ассиро-вавилонские источники по истории Урарту [այսուհետև՝ АВИИУ (ВДИ, 1951, № 10 (IV, 7), прим. 41)].

6 AKA, I, p. 75, col. V, line 68; АВИИУ, № 10 (V, 67), прим. 64.

7 Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, Երևան, 1963, էջ 14—15։

8 Գ. Բ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 441—442 և ծան. 26։

9 С. Г. Бархударян, Урартское происхождение армянского нахараркого рода Арцруни (Исследования по истории культуры народов Востока, М., 1960), с. 37—38.

10 Г. А. Капанцян, Историко-лингвистическое значение топонимики древней Армении, Ереван, 1940, с. 22.

11 Դ. Ն. Մարգսյան, Խորենացու «Պատմության» մեջ հիշատակվող Հայաստան երկիրը Ուրարտուն է, այլ ոչ թե Շուրբիան (Պատմա-բանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), 1984, № 3, էջ 186—187)։

12 Н. В. Арутюнян, Биайнили, Ереван, 1970, с. 399—402.

13 Г. А. Капанцян, նշվ. աշխ., էջ 38։

KUR

Պարոպատունի (ք), Ռշտունի (ք), Սանասուն (ք), Սասունի (ք) (հմմտ. Šašnu(i)ni)[14], Սիոնի (ք), Վալկունի (ք), Վարաժնունի (ք), Տրպատունի (ք) և այլն][15]։

Եթե ուշ հայկական ժամանակաշրջանում հիշյալ ցեղանունների ուրարտական -uni ածանցը (բացի արխայիկ ձևերից) վերածվել է -յան ածանցի և Արշամունի ձևից առաջացել է Արշամյան ձևը, Երվանդունիից՝ Երվանդյան, Խորխոռունիից՝ Խորխոռյան և այլն, ապա տեղանուններում ուրարտական -uni ածանցը (դարձյալ բացի արխայիկ ձևերից) վերածվել է -ան ածանցի, որի հետևանքով Սիոնի(ք) ձևից առաջացել է Սիսիան կամ Սիսական ձևը («Սի» արմատի կրկնությամբ)[16]։

Այս փաստերը ցույց են տալիս, որ տեղանուններում ուրարտերենի -uni անվանակերտ ածանցը համազոր է ոչ միայն հայերենի-ան, այլև -ական անվանակերտ ածանցին։

Տեղանուններում ուրարտերենի -uni-ին հայերենի -ան-ի փոխարինվելու օրինակ է ծառայում նաև Բազգուն տեղանունից հայկական Բազկան ազգագավառի անվան առաջացումը[17] և այլն[18]։

Էր(և)բունի (Er(e)buni) տեղանվան մեջ -uni վերջածանցը անջատելուց հետո մնում է Er(e)b-// Er(e)v-բառամասը, որը համարվում է Er(e)buni անվան արմատը։ Մեր կարծիքով, այդ Er(e)b // Er(e)v-արմատը ուրարտերենի ebri (տարբերակ՝ euri) կամ evri «տեր» բառի մետաթեզային (դրափոխված) ձևն է։ Այս ենթադրությունը հաստատվում է խուրրիերենում ebri կամ evri «տեր» բառի մետաթեզային erbi կամ ervi ձևի գոյության փաստով։ Ի դեպ, խուրրիերենի «տեր» բառի թե՛ ebri կամ evri և թե՛ erbi կամ evri ձևերով կազմվել են բազմաթիվ անուններ, այդ թվում թե՛ անձնանուններ ու դիցա-

---

14 Դ. Ն. Սարգսյան, նշվ. հոդվ., էջ 185, ծան. 39։

15 Ուրարտական -uni ածանցով ցեղանունների հանդես դալը վաղ հայկական էթնոնիմների շարքում ունի ոչ միայն ուրարտա-հայկական լեզվական, այլև էթնիկական ընդհանրություն։ Դա այն ոսկե շղթաներից մեկն է, և նույնիսկ ամենագլխավորը, որը մատնանշում է կամ -uni ածանցը իրենց անուններում կրող ուրարտական ցեղերի հարատևելը հայկական էթնիկական աշխարհում, կամ այդ ածանցը իրենց անուններում կրող հայկական ցեղերի առկայությունը ուրարտական պետության դրված տարածքում, նրա էթնիկական աշխարհում՝ դեռևս այդ պետության գոյության դարաշրջանում (այս հարցին մանրակրկիտ կանդրադառնանք հոդվածի վերջում)։

16 Պետք է նկատի ունենալ, որ Սիս(ի)ական տարբերակում երկրորդ «սի» արմատի «ի» ձայնավորը սղվել է, երբ, Սիսիան տարբերակի հետ համեմատած, ավելացել է «ական» ածանցը։

17 Ս. Տ. Երեմյան, նշվ. աշխ., էջ 42։

18 Սևանա լիճը ուրարտերեն սեպագիր արձանագրություններում հանդես է եկել ṣu.ú-ni-(e), («լճային», «ծովային») տերմինի տակ, որից էլ, հավանաբար, սերում է այդ լճի անունը (Սևան)։ Սա դարձյալ ուշագրավ փաստ է տեղանուններում ուրարտերենի -uni ածանցը հայերենի -ան ածանցի փոխվելու կապակցությամբ։

նուններ և թե՛ տեղանուններ։ Այսպես, օրինակ՝ ebri կամ evri արմատով են կազմված խուրրիական անուններից Meme-ebri[19] «Մեմե-տեր»[20], Ebri-Batal[21] «Տեր-Բաթալ»[22], Ebri-šarri[23] «Տեր-արքա»[24] անձնանունները, Քաշիարի լեռներում գտնվող խուրրիական Նիրբու երկրի URU Išpili-i ebria[25] «Ի՛շպիլի-տեր» քաղաքանունը։[26] Միթթաննի երկրի արքա Տուշրաթթան Եգիպտոսի փարավոն Ամենհոտեպ III-ին ուղարկած նամակների ասսուրերեն[27] տարբերակներում իրեն անվանել է՝ Tušratta šar KUR Mittanni «Թուշրաթթան արքան է Միթթաննիի», իսկ խուրրիերեն[28] տարբերակներում՝ Tušrattave KUR Mittanneve ebrive կամ Tušratta KUR Hurvuhe everne «Տուշրաթթան Միթթաննիի (Խուրրի) տերն է», իսկ Ամենհոտեպ III-ին անվանում է Nimmurijave KUR Mizirreveneve ebriš «Նիմմուրան Միծիրրիի տերն է»։ Նշված օրինակներում ակներև է, որ խուրրիերենի ebri կամ evri «տեր» բառը համազոր է դարձել ասսուրերեն sarru «արքա» բառին [թեև խուրրիերենում եղել է «արքա» (zarra) բառը]։

Քննվող հարցի առթիվ ուշագրավ է հատկապես այն փաստը, որ Նուզիի խուրրիական արձանագրություններում հիշատակվել են անուններ, որոնք կազմվել են «տեր» բառի մետաթեզի ենթարկված erbi կամ ervi ձևով։ Այսպես, Նուզիի արձանագրություններում հիշատակված են ինչպես erviše «տերություն»[29] վերացական գոյականը և Ištar -ervi «Ի՛շթար-տեր» դիցա-

---

[19] W. Golenischeff, Vingt-quatre Tablettes Cappadocienne, St. Petersburg, 1891, t. 10, 14; Musee National du Louvre. Textes Cuneiformes, Paris, 1910, col. XX, p. 191, t. 15, 18.

[20] L. Oppenheim, Revue hittite et asiatique, Paris, 1938, vol. V, p. 18 (հմմտ. I. Gelb, Hurrians and Subarians, Chicago, 1944, p. 109).

[21] Musee National du Louvre. Textes cuneiformes, col. V, p. 50, t. 39.

[22] I. Gelb, Նշվ. աշխ., էջ 110, ծան. 8.

[23] Նույն տեղում, էջ, 67, E. F. Weidner, Archiv für Orientforschungen. V. XIII, Berlin, 1939/40, S. 116.

[24] I. Gelb, P. Purves, A. Macrae, Nuzi personal names (այսուհետև՝ NPN), Chicago, 1943, p. 210—211.

[25] AKA, 1, p. 300, col. II, line 16; АВИИУ, № 23. (II, 15).

[26] Այդ քաղաքանվան մեջ a-ն տեղանուններին յուրահատուկ վերջավորություն է, իսկ Išpili— արմատն ունի խուրրիական, ուրարտական ծագում. այդ արմատով կազմվել են արական հատուկ անուններ, որ հատկապես կրել են ուրարտական վերնախավի անդամները УКН, № 277, стк. 8:

[27] J. A. Knudtzon, Die El-Amarna Tafeln, Leipzig, 1915, № 19 Linie 3—4; A. Mercer, The tell-El-Amarna tablets, Toronto. 1939, № 19, line 3—4.

[28] J. A. Knudtzon, Նշվ. աշխ., № 24, տող. 103—104.

[29] Г. А. Капанцян, Историко-лингвистические работы (այսուհետև՝ ИЛР), Ереван, 1956, с. 465, прим. 2.

նունը, այնպես էլ խուրրիական մի շարք անձնանուններ, օրինակ՝ Ḫuip-ervi «Խուիպ-տեր», Kartip-ervi «Քարթիպ-տեր», Kelip-ervi «Քելիպ-տեր», Nanip-ervi «Նանիպ-տեր», [ID]Tešub-ervi «Թեշուբ-տեր», Ervi-šarri «Տեր-տրքա», Ervi-Ari «Տեր-Արի», Ervi-Ḫuta «Տեր-Խութա», Ervi-Nuḫni «Տեր-Նուխնի» և այլն[30]։ Այդպես է կազմված խուրրիական Քաթմուխի երկրի արքա Քիլի-Թեշուբին տրվող [I]Er-u-bi[31] «Տեր»[32] երկրորդ անունը։

Խուրրիերենի նման ուրարտերենում էլ ebri (տարբերակ՝ euri) կամ evri «տեր» բառով և նրա մետաթեզի ենթարկված erbi կամ ervi ձևով կազմվել են ըստմաթիվ անուններ, այդ թվում թե՛ անձնանուններ և թե՛ տեղանուններ։ Այսպես, օրինակ՝ ուրարտերենի ebri կամ evri «տեր» արմատով են կազմված Սայդուրի I-ի հորը տրված [I]Luti-i/ebri[33] անվան[34] և Ռուսա I-ին տրված [I]Uedi-i ebri[35] մականվան երկրորդ բառամասերը։ Համեմատաբար հաճախ euri կամ evri «տեր» բառը օգտագործվել է ուրարտական պանթեոնի գլխավոր աստված Խալդիի անվան հետ ([D]Ḫaldi-euri «Խալդիին՝ տիրոջը»[36], [D]Ḫaldie-eurie-ukie «Խալդիին՝ տիրոջը իր»[37])։

«Տեր» բառի մետաթեզի ենթարկված erb-կամ erv- արմատով է կազմված ուրարտական անունների միջավայրում շուրջ մ.թ.ա. 648 թվականին ասորերեն մի տեքստում[38] հիշատակված [URU]Erbual բնակավայրի անունը։ Այդ տեղանվան Erb-կամ Erv-«տեր» արմատը համապատասխանում է մեզ հետաքրքրող [URU]Er(e)buni քաղաքանվան Er(e)b- կամ Er(e)v- արմատին[39]։

---

30 NPN, p. 110—111; ИЛР, с. 465—467.

31 AKA, p. 40—41, col. II, line 25—27; АВИИУ, № 10 (II, 25).

32 A. Ungnad, Subartu, Berlin, 1936, S. 162; L. Oppenheim, նշվ. աշխ., հ. V, էջ 111; И. М. Дьяконов, Предыстория армянского народа, Ереван, 1968. с. 124, прим. 117.

33 УКН, №№ 1—3 (I), стк. 1.

34 NPN, p. 211; I. Gelb, նշվ. աշխ., էջ 82, ծան. 266.

35 УКН № 267, стк. 5.

36 УКН, с. 144.

37 УКН, №№ 21, стк. 1; 26, стк. 1, 7; 145, стк. 2 (հմմտ. УКН, № 19, ուրարտ. տող 13 և ասսուր. տող 12, ուր ուրարտերենի euri կամ evri բառին համապատասխանում է ասսուրերեն bēlu «տեր» բառը)։

38 УКН, № 37, стк. 5.

39 АВИИУ, № 80, с. 245. [URU]Er(e)buni անվան համեմատությամբ [URU]Erbual անունը, որը հիշատակվել է, ինչպես ընդգծվեց վերևում, ոչ թե ուրարտերեն, այլ ասսուրերեն տեքստում, ուրարտերենի -uni անվանակերտ ածանցի փոխարեն կրել է -(u)ai բաղադրիչը (u-ն հիմքի ցուցիչն է, a-ն, հավանաբար նաև i-ն, տեղանունների ցուցիչներ են)։

Այս փաստը ցույց է տալիս, որ Հին Արևելքում տարածված են եղել ուրարտերենի erb- կամ erv- «տեր» արմատով կազմված տեղանունները։

Ուրարտերենում «տեր» բառի մետաթեզի ենթարկված erb- կամ erv- արմատով կազմվել են նաև բայեր։ Այդպիսի կազմություն ունեն Սարդուրի II-ի տարեգրության erb-itu[40], Ռուսա IV-ի արձանագրության erb-uni[41], ուրարտական ոմն թագաժառանգի արձանագրության erb-uni[42] բայերը, որոնց ընդհանուր erb-կամ erv- «տեր» արմատի վրա ավելացել են բայական-itu և -uni վերջավորությունները (-itu-ն ներգործական սեռի անցյալ կատարյալի հոգնակի III դեմքի, իսկ-uni-ն ներգործական սեռի անցյալ կատարյալի եզակի III դեմքի վերջավորություններ են)։ Այդ բայերից առաջինը կարելի է թարգմանել ոչ թե մինչև այժմ ընդունված «վերցրին», «խլեցին», «հափշտակեցին» կամ «թալանեցին», «գողացան», «առևանգեցին», այլ «տիրեցին» իմաստով (կոնտեքստում՝ a-li LÚA.SIMEŠ-s er-bi-tu «ինչ զինվորները տիրեցին») իսկ երկրորդն ու երրորդը կարելի է թարգմանել ոչ թե մինչև այժմ ընդունված «վերցրեց», «խլեց», «հափշտակեց» կամ «թալանեց», «գողացավ», «առևանգեց», այլ «տիրեց»[43] իմաստով [կոնտեքստում՝ ITa-ta-a-še LUERUM GAŠAN (?)-i NIN.TUR er-bu-ni «Թաթան՝ ստրուկը տիրուհու, աղջիկ տիրեց (=աղջկան տեր դարձավ)» . I ANŠU.KUR.RA er-bu-u-ni «Մեկ ձի տիրեց (=ձիուն տեր դարձավ)»]։

Ուրարտերենի ebri կամ evri «տեր» բառը հայերենում հանդես է եկել աւրի ձևով [սրանով կազմվել են աւրեար կամ օրեար («տերեր»), աւրեանք («տերեր», «երևելիներ»), աւրիորդ կամ օրիորդ («տիրոջ որդի», «իշխանի որդի»), ազատօրեար («ազատ տերեր»), ավագօրեար («ավագ տերեր») և այլ բառեր և Օրի անձնանունը][44], իսկ նրա մետաթեզի ենթարկված erbi կամ ervi ձևը հայերենում հանդես է եկել երեւ—կամ էրեւ—արմատով, որը ինքնուրույն գործածություն չունի և հանդես է գալիս միայն ածանցների հետ, օրինակ՝ երեւ-ացող (երևացող), երեւ-ելի (երևելի), երեւ-ալ (երևալ), երեւ-ույթ (երևույթ), երեւ-ան (երևան) և այլն։

Այսպիսով, URUEr(e)buni տեղանունը կազմված է ուրարտերենի er(e)b- կամ er(e)v-(հայերեն՝ երեւ-, էրեւ-) «տեր» արմատից և ուրարտերեն-uni (հայերեն՝ -ան, -ական, հմմտ. -ունի- -յան) անվանակերտ ածանցից։ Ուստի URUEr(e)buni (=URUEr(e)vuni) նշանակում է «Տերունի» քաղաք, «Տերունական» քաղաք (հմմտ. «Արքունի» քաղաք, «Արքայական» քաղաք)։

Այդ նույն իմաստը պահպանվել է Էր(ե)բունի անունից գոյացած Երևվան քաղաքանվան մեջ, որը կազմված է երեւ- կամ էրեւ- (=er°v) «տեր» արմատից և -ան (=uni) անվանակերտ ածանցից։

Այժմ անդրադառնանք մեր կողմից վերևում ընդգծված ուրարտական -uni ածանցը իրենց անուններում կրող ինչպես ուրարտական, այնպես էլ հայկական ցեղերի լեզվական ու էթնիկական ընդհանրությունների հարցերին։

---

40 УКН, № 155, С, стк. 46.

41 УКН, № 456, стк. 7.

42 УКН, № 462, лиц. стор., стк. 17.

43 Մ. Ա. Իսրայելյան, Էրեբունի բերդ-քաղաքի պատմություն, Երևան, 1971, էջ 13։

44 Г. А. Капанцян, Хурритские слова армянского языка (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1951, №5, էջ 42—43); ИЛР, с. 265—267.

Դիտության մեջ վաղուց ստեղծվել է Արմե-Շուբրիա տեսությունը, որը հայ ժողովրդի կազմավորման պրոցեսը անջատում է ուրարտական պետության էթնիկական աշխարհից (մինչև այդ պետության անկումը) և դիտում նրանից անկախ ու ինքնուրույն մի երևույթ։ Այդ տեսության կողմնակիցներից ոմանք[45] ուրարտական արձանագրությունների Արմե երկրի անունն ու նրա էթնոսը բխեցնում են ուրարտական արձանագրությունների Ուրմե երկրի անունից ու նրա էթնոսից, իսկ ոմանք[46] էլ ասսուրական արձանագրությունների Շուբրիա երկիրը նույնացնում են ուրարտական արձանագրությունների Ուրմե երկրին, երկիր, որի բնակիչները՝ ուրումացիները, մ. թ. ա. XII դ. Հայկական լեռնաշխարհ են թափանցել Փոքր Ասիայում գտնվող խեթական պետության տարածքից քաշքացիների կամ աբեշլացիների հետ (միասին նրանք կազմել են 4000 հոգի)[47]։ Արմե-Շուբրիա տեսության կողմնակիցներից Ի. Մարկվարտի, Բ. Բ. Պիոտրովսկու և Ս. Տ. Երեմյանի կարծիքով այդ եկվոր ուրումացիները եղել են արմենները[48]։ Ըստ այդ տեսության, հայ ժողովուրդը կազմավորվել է Արմե-Շուբրիա երկրում՝ խեթական աշխարհից եկած ուրումացիների կամ արմենների և տեղաբնիկների համաձուլմամբ։ Երբ կործանվել է ուրարտական պետությունը, հայ ժողովուրդը տեր է դարձել նրա տարածքին։ Սակայն, այդ կարծիքին հակառակ, սեպագիր արձանագրությունների փաստերը ցույց են տալիս, որ ուրարտական արձանագրություններում Շուբրիա երկիրը հանդես է եկել իր Կուլմերի (ասսուրական՝ Քուլիմերի, հետագայում՝ Քղիմար) գլխավոր կենտրոնի անվան տակ և տարբերվել է Ուրմե երկրից[49]։ Շուբրիան եղել է խուրրիական երկիր, որը մ. թ. ա. 673 թ. գրավվել է Ասորեստանի թագավոր Ասարխադդոնի կողմից, զրկվել իր հիմնական բնակչությունից և վերածվել ասսուրական երկու փոխարքայությունների։ Այդ վիճակով մնացել է ասսուրական պետության կազմում մինչև վերջինիս անկումը և հենց այդ ժամանակ էլ Ասորեստանի հետ նվաճվել է

---

45 J. Marquart, Die Entstehung und Weiderherstellung der armenischen Nation, Potsdam, 1919; S. 67; Б. Б. Пиотровский. Ванское царство. М.. 1959, с. 124.

46 Г. А. Меликишвили, Наири—Урарту, Тбилиси, 1954, с. 52; Ս. Տ. Երեմյան, Հայերի ցեղային միությունը Արմե-Շուբրիա երկրում (ՊԲՀ, Երևան, 1958, № 3, էջ 64)։

47 АВИИУ, №№ 10 (11, 89), 13.

48 Ի. Մ. Դյակոնովը արմենների նախատիպը համարում է արևելյան մուշքերին, որոնք Հայկական լեռնաշխարհի շուբարիներով բնակեցված Ալզի (հմմտ. Աղձնիք) և Պուրուլումզի մարզեր են խափանցել դրսից՝ շուրջ մ. թ. ա. 1165 թվականին (И. М. Дьяконов, Предыстория армянского народа, с. 214—224)։ Սակայն այս կապակցությամբ պետք է նկատի ունենալ, որ Ասորեստանի թագավոր Թիգլաթպալասար I-ի (1115—1077) սեպագիր տեքստերը հիշատակում են, թե այդ մուշքերը 1115 թ. 20.000 հոգով, իրենց 5 թագավորների գլխավորությամբ թողնում են Ալզի և Պուրուլումզի մարզերը, շարժվում են դեպի Քաշիարի լեռների հյուսիսում գտնվող շուբարիական Քաթմուխի մարզը։ Թիգլաթպալասար I-ը հարձակվում է նրանց վրա, հաղթում ճակատամարտում, շարդում նրանցից շատերին, իսկ կենդանի մնացած 6000 հոգուն ենթարկում իրեն և թույլ տալիս բնակվելու այնտեղ ((АВИИУ, № 10, I, 62)։ Հետագայում Ասորեստանի թագավոր Աշշուրնածիրապալ II-ը (884/3—859) Քաթմուխի մարզի վրա արշավելիս հանդիպում է այդ մուշքերի սերունդներին, որոնք նստակյաց էին դարձել, ստեղծել էին իրենց մարզը և հարկ էին վճարում Ասորեստանին (АВИИУ, № 23, I, 69)։ Բայց Աշշուրնածիրապալ II-ի արշավանքից հետո այլևս չի հիշատակվում այդ Մուշքու մարզը։ Հավանաբար Աշշուրնածիրապալ II-ի արշավանքից հետո կործանվել է այն ու թողել քաղաքական ասպարեզը։ Քաղաքական ասպարեզը թողել են նաև այդ մարզի բնակիչները՝ մուշքերը, քանի որ նրանք նույնպես չեն հիշատակվում Աշշուրնածիրապալ II-ի արշավանքից հետո։ Ուստի դեռևս մ. թ. ա. IX դարի սկզբին քաղաքական ասպարեզ թողած այդ մուշքերը չէին կարող հետագայում արմենների նախատիպը լինել։

49 Д. Н. Саркисян, Страна Шубриа в урартских надписях (Древний Восток, № 2, Ереван, 1976, с. 121—132).

Բաբելոնի կողմից[50], ենթարկվել նրան՝ զրկվելով ինքնուրույն թագավորությունից։ Բաբելոնի կողմից նվաճվելուց հետո Շուբրիան անհետանում է քաղաքական ասպարեզից։ Արմեն նույնպես եղել է խուրրիական երկիր և տարբերվել է Ուրմե երկրից։ Արմե երկիրը ձևավորվել է խուրրիական Նիխրիա (հետագայում՝ Նիրկերտ) քաղաքի և համանուն մարզի բազայի վրա։ Շուրջ մ. թ. ա. 911 թ., Նիխրիա մարզը նվաճվել է Ասորեստանի կողմից[51], մտցվել ասսուրական փոխարքայություններից մեկի մեջ, որի բնակիչները հիմնականում արամեացիներ էին։ Ուրարտուի թագավոր Սարդուրի II-ը (764—735), երբ նվաճում է այդ մարզը[52], այն կոչում է ոչ թե Նիխրիա, այլ Արմե անունով (Նիխիրիանի է կոչվել նրա մայրաքաղաքը)։ Ասորեստանի տիրապետության տակ եղած ժամանակ Նիխրիա մարզը (որը սահմանակից էր արամեացիների երկրին) կամ արամեացվել է, կամ թե ուրարտացիները սխալմամբ այն դիտել են որպես արամեացիների երկիր ու կոչել Արմե անունով։ Դրան հակառակ Ուրմե (ասսուրական՝ Ուրումու) երկրի բնակիչները, ինչպես վերևում ասվեց, եկել են խեթական միջավայրից և, հավանաբար, քաշքացիների կամ աբեշլացիների նման պատկանելիս են եղել խեթա-լուվիական էթնիկական աշխարհին։ Ուրմե երկիրը տարածված է եղել Մուշի և Թրմերդի միջև[53]։ Ուրարտուի թագավոր Սարդուրի II-ը Ուրմե երկիրը նվաճելիս ավերել է նրա ամրոցները, գերեվարել և Ուրարտու է քշել նրա բնակչությունը[54]։ Սարդուրի II-ի նվաճումից հետո Ուրմե երկիրը ընդմիշտ քաղաքական ասպարեզը թողել է։ Սարդուրի II-ի նվաճումից[55] հետո քաղաքական ասպարեզը թողել է նաև Արմե երկիրը։ Փաստորեն Արմեն, Ուրմեն և Շուբրիան միմյանցից տարբեր երկրներ են եղել և նրանք երբեք չեն կազմել քաղաքական ու էթնիկական մի միություն։ Անկում ապրած, պետականությունից ու հիմնական բնակչությունից զրկված, քաղաքական ասպարեզից անհետացած այդ երկրներում, բնականաբար, չէր կարող ձևավորվել հայ ժողովուրդը։

Սեպագիր արձանագրությունների փաստերը վկայում են, որ արմենների և ուրարտացիների կապը ոչ թե ժամանակավոր, այլ արմատական բնույթ ունի։ Ըստ Ասորեստանի թագավոր Սալմանասար III-ի (859—824) սեպագիր արձանագրությունների տվյալների[56], երբ Ուրարտուն Արամե թագավորի ելխավորությամբ նոր էր հանդես եկել քաղաքական ասպարեզ, ուներ ոչ մեծ տարածք (այն ձգվում էր Դայաեհի (ուրարտական՝ Դիաուխի, հետագայում՝ Ծայք) երկրի հարավից, անցնում Նաիրի ծովի կամ Վանա լճի արևելյան երկարությամբ և հասնում մինչև այդ լճի հարավ-արևելքը)։ Այդ ժամանակ Ուրարտուի վարչական բաժանման հիմքում ընկած էր քաղաք-ամրոցը իր շրջակայքի բնակավայրերով հանդերձ։ Ուրարտուն բաժանված էր այդպիսի 4 վարչական միավորների միջև։ Դրանք էին՝ Արզաշքուն (սա եղել է նաև երկրի մայրաքաղաքը), Արամալին, Ջանղիունան, Սուգունիան։ Սալմանասար III-ի արշավանքների հետևանքով ավերվում և քաղաքական ասպարեզը թողնում են Արզաշքու, Ջանղիունա և Սուգունիա քաղաք-ամրոցները։ Կանգուն է մնում Արամալին։ Հետագայում, երբ ուրարտական պետությունը բռնում է

---

50 И. М. Дьяконов, Малая Азия и Армения около 600 г. до н. э. и северные походы вавилонских царей (ВДИ, 1981, № 2, с. 37, прим. 29—30).

51 W. Andrae, Die Stelenreihen in Assur, Leipzig, 1913, № 63. S. 62—63; АВИИУ, № 40(б).

52 УКН, № 156, ДI+ДII, стк. 11—14.

53 Դ. Ն. Սարգսյան. Նշվ. հոդվ., էջ 123—127.

54 УКН, № 155, А, стк. 22—25.

55 УКН, № 156, ДI+ДII, стк. 11—16.

56 H. C. Rawlinson, The cuneiform inscriptions Western Asia, London, 1870, vol. III, col. I, line 14—29; col. II, line 47—66; E. Schrader. Keilinschriftliche Bibliothek, I, Berlin, 1889, S. 154—156, 164—168; АВИИУ, № 27 (I.23· II. 45—54).

վերելքի ճանապարհ և դիմում նվաճումների ու իրեն է ենթարկում ամբողջ Հայկական լեռնաշխարհը, փոխվում է նաև նրա վարչական բաժանումը։ Ուրարտուի վարչական բաժանման հիմքում դրվում է մարզային բաժանումը։ Ուրարտուն բաղկացած էր բազմաթիվ մարզերից։ Դրանցից մեկն էր Արմարիլի[57] կամ Արմիրալի[58] մարզը։ Այն ձևավորվել է նախկին Արմալի վարչական միավորի բազայի վրա։ Սակայն նրա համեմատությամբ Արմաբիլի-Արմիրալին ավելի ընդարձակ տարածք է գրավել, քանի որ այն իր մեջ ներառել է ոչ թե մեկ, այլ արդեն 9 քաղաք-ամրոցներ իրենց շրջակայքի բնակավայրերով։ Տարածքի այդ ընդարձակումը, անշուշտ, տեղի է ունեցել անկում ապրած Արղաշքու, Զանզիունա և Սուգունիա նախկին վարչական միավորների հաշվին։ Իր մեջ միավորելով Ուրարտուի նախնական, բուն տարածքը, Արմարիլի-Արմիրալին եղել է Ուրարտուի բուն մարզը։ Արմարիլի-Արմիրալին եղել է նա՛ Ուրարաուի արքունի մարզը, քանի որ նրա Արբու և Ռիար քաղաքներում ապրել են երկրի արքաները, իսկ այդ քաղաքների շրջակայքի 7 բնակավայրերում ապրել են երկրի արքայական տան անդամները, արքաների եղբայրները, նրանց «արքայական զարմը»։ Այդ մարզում են գտնվել նաև Ուրարտուի նոր մայրաքաղաք Տուշպան (Վանը), ինչպես նաև երկրի գլխավոր աստված Խալդիի տաճարը։ Արմարիլի-Արմիրալի մարզը ունեցել է նաև զարգացած տնտեսություն, իր մարզի զորքը, իր մարզի կառավարիչը։ Ուրարտուի թագավորները երկրի ներքին ու արտաքին հակասությունները լուծելու գործում հենվել են Արմարիլի-Արմիրալի մարզի՝ նրա կառավարիչի, այդ մարզի զինվորական ուժի վրա։ Հետագայում Դարեհ I-ի (522—485) Բեհիստունյան[59] և Նաքշիռուստեմյան[60] եռալեզու սեպագիր արձանագրություններում Ուրարտուին զուգահեռաբար տրվող Արմինա երկրանվան, այդ երկրի էթնիկական ծագման ակունքը պետք է որոնել Ուրարտուի տարածքում։ Մեր կարծիքով դա Ուրարտուի բնիկ, կենտրոնական և արքունի Արմարիլի-Արմիրալի մարզն է։ Սա հաստատվում է մի շարք փաստերով։ Այսպես, Բեհիստունյան արձանագրության Արմինա (Armina) երկրանունը ուրարտական Արմարիլի-Արմիրալի (Armarili-Armirali) մարգի անվան և նրա Արամալի (Aramali) նախատիպի "Arm" կամ "Arma"-"Armi-"Arama" արմատի հետ կապվում է իր «Arm» կամ «Armi» արմատով։ Սակայն ընդհանուր «Arm» արմատից հետո ինչպես Բեհիստունյան արձանագրության Արմինա երկրանունը, այնպես էլ ուրարտական Արմարիլի-Արմիրալի մարզի անունը և նրա Արմալի նախաձևը կրել են բառամասեր։ Այդ բառամասերի կապակցությամբ պետք է նկատի ունենալ հետևյալը։ Երբ Արամալի նախաձևի հետ համեմատում ենք Արմարիլի-Արմիրալի մարզի անունը, պարզ երևում է, որ վերջինիս մեջ «ri» բառամասը արմատական չէ։

Գ. Ղափանցյանը[61] "ri"-ն դիտել է ցեղ մատնանշող ածանց խուրրիական հետևյալ արական անձնանուններում՝ ^{I}Küzari (որը նա ստուգաբանել է «քուգացի»), ^{I}Titinari (ստուգաբանել է «թիթիացի»), ^{I}Tabšari (իգական՝ ^{I}Tabšahi), ^{I}Bagari, ^{I}Siari, ^{I}Kilari:

---

[57] F. Thureau-Dangin, Une relation de la huitième campagne de Sargon, Paris, 1912, p. 42—44, lin 269—279; АВИИУ, № 49 (269).

[58] R. F. Harper, Assyrian and Babylonian letters, vol. V, 1896, № 144; L. Waterman, Royal correspondence of the Assyrian Empire, Ann Arbor, vol. I, 1930, № 144; R. F. Pfeiffer, State letters of Assyria, New-Haven, 1935, № 8; АВИИУ, № 50(4).

[59] F. H. Weissbach, Die Keilinschriften der Achämeniden (այսուհետև՝ KA), Leipzig, 1911, S. 8—75.

[60] KA, S. 88—89.

[61] ИЛР, с. 180. прим. 1.

Ուրարտական ^{D}Sardi աստվածանունից[62] առաջացած ^{ID}Sarduri արքայանվան[63] մեջ „ri"-ն դարձյալ ածանց է և մատնանշում է այդ արքայանվան սերումը, ծագումը ^{D}Sardi աստվածանունից։ Ուրարտական արձանագրություններում ^{ID}Sarduri արքայանունը հիշատակված է նաև ^{ID}Sarduhi ձևով[64], որի մեջ „ri" բառամասին փոխարինել է ուրարտական „hi" ածանցը, որը դարձյալ ցույց է տալիս ինչպես սերում և ծագում, այնպես էլ ցեղակցական կապ[65]։ Այդ վերջին փաստը՝ "ri" բառամասը "hi" ածանցով փոխարինվելը, մեկ անգամ ևս հաստատում է ուրարտերենում "ri" բառամասի սերում, ծագում, ցեղակցական կապ մատնանշող ածանց լինելը։

Նշված օրինակները թույլ են տալիս ենթադրելու, որ «ri»-ն սերում, ծագում, ցեղակցական կապ մատնանշող ածանց է ուրարտական Armarili-Armirali մարզի անվան մեջ և ցույց է տալիս այդ մարզի անվան ինչ-որ ցեղի անունից, տվյալ դեպքում՝ «Arma»—«Armi» կամ «Արմի»-ներ, «արմեններ» ցեղի անունից ծագելը, ցեղ, որով բնակեցվել է այդ մարզը։ Իսկ դա նշանակում է, որ Ուրարտուի բնիկ Արմարիլի-Արմիրալի (հմմտ. Արամալի) մարզի բնակիչները, այն է՝ բուն ուրարտացիները, եղել են արմեններ կոչվող ցեղերը։ Այդպես արմեններով կամ ուրարտացիներով է բնակեցված եղել Բեհիստունյան արձանագրության Արմինա կամ Ուրաշտու (Ուրարտու) երկիրը[66]։ Այս փաստն արդեն խոսում է Բեհիստունյան արձանագրության Արմինա երկրի և ուրարտական Արմարիլի-Արմիրալի մարզի ու նրա Արամալի նախատիպի էթնիկական նույնության մասին։ Սակայն Արմարիլի-Արմիրալի մարզի անվան համեմատությամբ Բեհիստունյան արձանագրության Արմինա երկրանվան մեջ «ri» ցեղածանցը չի պահպանվել, քանի որ այն արդեն չի դիտվել ցեղային մի երկրին տրվող անուն, ինչպես Արմարիլի-Արմիրալին է, այլ այն փոխարինվել է Ուրարտու (Ուրաշտու) երկրանվանը, որի տակ հանդես են եկել բազմաթիվ ցեղեր ու ցեղային երկրներ։ Սալմանասար III-ի տեքստերում Արամալի (^{URU}Aramali) նախաձևը եղել է ուրարտական քաղաքանուն, այլ ոչ թե ցեղային երկրի անուն, և այդ պատճառով էլ այդ քաղաքանվան մեջ չի հիշատակվել «ri» ցեղածանցը։

Ինչ վերաբերում է Արմարիլի-Արմիրալի մարզի անվան և նրա Արամալի նախաձևի ընդհանուր «li» վերջավորության և Բեհիստունյան արձանագրության Արմինա երկրանվան «(i)na» վերջավորության փոխհարաբերությանը, ապա ամենից առաջ պետք է նկատի ունենալ, որ «li» բառամասը համապատասխանում է ուրարտերենի ուղղական հոլովի հոգնակի թվի «li» վերջավորությանը[67]։ Այդ բառամասով կազմվել են ուրարտական տեղանուններ, օրինակ՝ ^{I}Rusa անձնանունից կազմվել է ^{I}Rusahinili քաղաքանունը[68], ^{I}Argišti անձնանունից կազմվել է ^{I}Argištihinili քաղաքանունը[69], կամ ^{KUR}Lulue երկրանունը ուրարտական սեպագիր արձանագրություններում հիշա-

62 УКН, № 27 (22).

63 УКН, с. 440.

64 И. М. Дьяконов, Урартские письма и документы, М., 1963, с. 34—35, № 5; УКН, № 460.

65 И. М. Дьяконов, Языки древней передней Азии (այսուհետև՝ ЯДПА), М., 1967, с. 142.

66 KA. S. 30—35, §§ 26—28; S. 54—61, §§ 49, 52

67 ЯДПА, с. 138.

68 УКН, № 268 (9).

69 УКН, № 127, IV (72), № 128, B2 (41), № 137 (5).

ակվել է նաև KUR Luluinili *ձևով*[70]*։ Ուրարտերենում* "li" *բառամասը փոխարինվում է* "na" *կամ* "ina" *վերջավորությամբ, օրինակ՝* I Rusahinili *քաղաքանունը հիշատակվում է նաև* I Rusahina *ձևով*[71], I Arhisihinili *քաղաքանունը՝* I Argištihina *ձևով*[72], KUR Luluinili *երկրանունը՝* KUR Luluina *ձևով*[73], KUR Bianili *երկրանունը՝* KUR Biaina *ձևով*[74]*։ Այս օրինակները թույլ են տալիս ենթադրելու, որ եթե Բեհիստունյան արձանագրության Արմինա երկրանունը իր հիմքում կրել է ուրարտական Արմի(րա)լի-Արմա(րի)լի մարզի անվան և նրա Արամալի նախաձևի „Arm"-„Armi" արմատը, ապա իր վերջավորությունում ստացել է „li" բառամասին փոխարինած ուրարտական -(i)na վերջավորությունը։ Ուստի Բեհիստունյան արձանագրության Արմինա երկրանունը թե իր հիմքով և թե վերջավորությամբ ունի ուրարտական ծագում և բխում է ուրարտական Արմի(րա)լի-Արմա(րի)լի երկրանունից, հատկապես նրա Արամալի նախաձևից, իհարկե, վերջինիս „r" և „m" բաղաձայններին հաջորդող ձայնավորների սղմամբ ու հնչյունափոխությամբ հանդերձ, որը օրինաչափ է ուրարտերենին (այդ կապակցությամբ վառ օրինակ են ծառայում* Aramali-Armarili-Armirali *տարբերակները)։*

Ուրարտական աշխարհի հետ Բեհիստունյան արձանագրության Արմինա երկրի կապի մասին է խոսում նաև այդ երկրի անվան «Arm» կամ «Armi» արմատի և ուրարտական պետության կազմավորման արշալույսին Ուրարտուի մեջ հայտնի Արամե (Arame) [տարբերակներ՝ Արամու (Aramu), Արրամու (Arramu)] թագավորի[75] *անվան «Arm» կամ «Aram» արմատի ընդհանրությունը։ Այս կապակցությամբ ուշագրավ են Մովսես Խորենացուն*[76] *հասած հայկական ժողովրդական ավանդությունների տվյալները, որոնց համաձայն Արմենիա (հմմտ. Արմինա) երկրի անունը ծագել է Արամ թագավորի անունից, որը կառավարել է Հայկական լեռնաշխարհում Ասորեստանի թագուհի Շամիրամից (Շամմուրամաթ—810—803) մեկ սերունդ առաջ և համապատասխանում է Ուրարտուի առաջին թագավոր Արամեին (859—844)*[77]*։ Ինչպես երևում է, հայկական ժողովրդական ավանդությունները ևս ընդգծում են Արմինա-Արմենիա երկրի կապը բուն ուրարտական աշխարհի հետ։*

Ուրարտերենում հիշատակված է նաև «arm» արմատով կազմված arume *(«ընծա», «նվեր») հասարակ անունը*[78]*, որի իմաստը, անշուշտ, ընկած է «Arm» արմատով կազմված ուրարտական հատուկ անունների հիմքում։ Ան-*

---

70 УКН, № 264 (урарт. 29).

71 УКН, № 286 (лиц. стор. 5).

72 УКН, № 142 (I).

73 УКН, № 155 F (4); № 278 (3).

74 УКН, № 43 (5), 44 (5), 57 (7), 58 (13), 79 (8), 92 (a-7, c-7), 104 (II, 22), 108 (10, 21), 131 (9).

75 A. C. Rawlinson. The cuneiform inscriptions Western Asia. vol. III, col. I, line 24; col. II, line 48—51; E. Schrader, Keilinschriftliche Bibliothek, I, S. 132, Linie 44; A. Billerbeck und F. Delitsch, Beitrage zur Assyriologie und semitischen Sprachwissenschaft, Band VI, Leipzig, 1909, S. 144; C. F. Lehmann-Haupt, Materialien znr alteren Geschichie Armeniens und Mesopotamiens, Berlin, 1907, S. 33—42; АВИИУ. № 27—33.

76 *Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1961, գլ. I (12, 14)։*

77 *Գ. Ա. Ղափանցյան, Ուրարտուի պատմություն, Երևան, 1940, էջ 137։*

78 УКН, № 264 (урарт. 27); № 276 (лиц. стор. 44); УКН, с. 390.

կասկած, Բեհիստունյան արձանագրության Ուրաշտու (Ուրարտու) երկրանվանը փոխարինած Արմինա (Արմենիա) երկրանվան հիմքում ևս ընկած են ուրարտերենի arumu բառի արմատը և նրա իմաստը։

Ինչպես էթնոսի, այնպես էլ տոպոնիմիկայի, օնոմաստիկայի և հասարակ անունների հետ կապված այս փաստերը հաստատում են, որ Բեհիստունյան արձանագրության Արմինա երկիրը հիրավի ունի ուրարտական ծագում և կապված է Ուրարտուի բնիկ, կենտրոնական և արքունի Արմարիլի-Արմիրալի մարգի և նրա Արամալի նախատիպի հետ թե՛ իր անվանումով և թե՛ իր էթնոսով։

Անշուշտ, այս արմատական կապն է հիմք դարձել, որ Դարեհ I-ի Բեհիստունյան արձանագրության պարսկերեն տարբերակի Արմինա (Արմենիա) երկիրը բաբելոներեն տարբերակում կոչվել է Ուրաշտու (Ուրարտու) երկիր, իսկ պարսկերեն տարբերակի արմիներ (արմեններ) ժողովուրդը բաբելոներեն տարբերակում կոչվել է ուրաշտներ (ուրարտներ) ժողովուրդ։ Անշուշտ, դարձյալ այս արմատական կապն է պատճառը, որ նույն արձանագրության պարսկերեն տարբերակի արմիներ (արմեններ) կոչվող Արախայի, Խալդիթայի և Դադարշիի[79] անունները ունեն բացարձակապես ուրարտական ծագում։ Դարեհ I-ի Բեհիստունյան արձանագրությունում միևնույն երկիրը Արմինա (Արմենիա) և Ուրաշտու (Ուրարտու) դիտվելու, միևնույն էթնոսը արմիներ (արմեններ) և ուրաշտներ (ուրարտներ) համարվելու ամբողջ գաղտնիքն այն է, որ տարբեր ժողովուրդներ տարբեր անուններով են կոչել դրանց (ասորեստանցիները և բաբելոնացիները այդ երկիրը կոչել են Ուրաշտու-Ուրարտու, նրա բնակիչներին՝ ուրաշտներ-ուրարտներ, իսկ պարսիկներն ու հույները այդ երկիրը կոչել են Արմինա-Արմենիա, նրա բնակիչներին՝ արմիներ-արմեններ)։

Փաստորեն արմենները և ուրարտները նույնն են և նրանք են եղել Ուրարտուի բնիկ էթնոսը։ Արմենները կամ ուրարտները եղել են Հայկական լեռնաշխարհի ամենահնագույն մայր ցեղերից մեկը։

Ինչ վերաբերում է ուրարտական պետությանը, ապա այն եղել է արմենների կամ ուրարտների պետությունը։

Սեպագիր ժամանակաշրջանում Հայկական լեռնաշխարհի բնակչությունը բաղկացած էր 5 առանձին-առանձին ցեղամիություններից։ Դրանք էին՝ Ուրուատրին, Շուբարին, Նաիրին, Խաթեն, էթիունին։ Սրանցից առաջին երեքը հանդես են եկել նախաուրարտական ժամանակաշրջանում (սրանց քաղաքական նպատակը ասսուրական ճնշումից պաշտպանվելն էր), իսկ վերջին երկուսը՝ ուրարտական ժամանակաշրջանում (սրանք էլ ձգտում էին պաշտպանվել ուրարտական նվաճումից)։ Հիշյալ ցեղամիություններից Ուրուատրին[80] զբաղեցրել է Հայկական լեռնաշխարհի հարավային և հարավ-արևելյան տարածքները։ Այդ ցեղամիության բնակիչներն են եղել ուրարտները կամ արմենները, որոնք ստեղծել են Ուրարտու-Արմենիա (հմմտ. Ուրաշտու-Արմինա) հզոր պետությունը։ Շուբարի[81] ցեղամիությունը զբաղեցրել է Հայկական լեռնաշխարհի հարավային և հարավ-արևմտյան տարածքները։ Այդ ցեղամիության բնակիչներն էին շուբարիները կամ խուրրիները։ Շուբարի ցեղամիության բնակիչներին հաջողվել է Հայկական լեռնաշխարհում պետություն ստեղծել Շուբրիա երկրում, որը, սակայն, հզորության չհասավ Ասորեստանի և Ուրարտուի ճնշումների պատճառով։ Հաջորդը Խաթե ցեղամիությունն է։

---

79 Բաբելոներեն տարբերակում այդ անձնավորությունները կոչվում են ուրաշտներ (ուրարտներ)։

80 L. Messerschmidt. Keilschrifttexte aus Assur historischen Inhalts (այսուհետև՝ KAH,I), Band I, Leipzig, 1911. № 13; АВИИУ, № 2, 19, 21.

81 KAH, I, NoNo 3–5. 17. 66 (17—32); O. Schroeder, Keilschrifttexte aus Assur historischen Inhalts, Band II, Leipzig, 1922. № 58. 60, 61; № 10 (col. II, line 89); АВИИУ, № 1, 3—8, 10 (II, 89).

Նրա մասին պետք է նկատի ունենալ հետևյալը։ Խեթական պետության օրոք (մ. թ. ա. XIX դ. կեսից մինչև մ. թ. ա. XII դ. սկիզբ) Հայկական լեռնաշխարհի արևմտյան և Հյուսիս-արևմտյան տարածքում, մասամբ նաև նրանից դեպի արևմուտք ընկած փոքրասիական շրջաններում հանդես են եկել մի քանի փոքր ցեղային երկրներ։ Նրանք փորձում էին հասնել ինքնուրույնության, բայց հանդիպում էին խեթական պետության դիմադրությանը։ Այդպիսի երկրներից էր Հայասան (կոնտեքստում՝ Խայաշա)[82], որը կարողացավ նույնիսկ հասնել ինքնուրույն պետականության։ Հայասայի տոպոնիմիկան (Ազզի, Արիպսա, Դուկկամա, Խալիմանա) և օնոմաստիկան (Կարաննի, Խուկաննաս, Մարիաս, Մուտտիս) ցույց են տալիս, որ այն եղել է «հայերի», «հայալեզու ցեղերի» երկիր։ Սակայն խեթական պետության անկման հետ (մ. թ. ա. XII դ. սկիզբ) անկում ապրեց նաև Հայասան և չհասավ հզորության։ Այդ ժամանակից քաղաքական ասպարեզը ընդմիշտ թողեց նաև նրա անունը[83]։ Ուրարտական պետության օրոք Հայկական լեռնաշխարհի և Փոքր Ասիայի հիշյալ շրջաններում գտնվող բնակիչները (ցեղերը, ցեղային երկրները) ուրարտական վտանգից պաշտպանվելու նպատակով միավորվում են և ստեղծում ցեղամիություն, որը կոչվեց Խաթե[84]։ Ուրարտական արձանագրությունները հիշատակում են այդ ցեղամիության տարածման արեալի հետևյալ կոնկրետ կոորդինատները՝ Նիրիբախուբի երկիր, Ուրմանի քաղաք, Աղտնի քաղաք, Պիտեիրա քաղաք, Մուշանի երկիր, Զապշա քաղաք, Տումեիշբի քաղաք, Կալանի երկիր, Քարնիշե երկիր, Խաթե երկիր (Մուպանի-Մոփքի մոտ), Մելիտեանի-Մելիդու քաղաքի շրջան, ինչպես նաև Մուշքինի (Փոյուգիա) և Խալիտու (Խաղտիք՝ Ճորոխի հովտում) երկրների միջև ձգվող ընդարձակ տարածքում գտնվող Խաթե երկիրը, որի տարածքը համապատասխանում է հետագա Բարձր Հայքին և Փոքր Հայքին։ Խաթե ցեղամիության տարածման արեալի հիշյալ տեղանունների մի մասը եթե ունի խեթալուվիական, ապա մյուս մասն ունի հայկական կերպարանք։ Այս փաստը հաստատում է, որ Խաթե ցեղամիության բնակչության մեջ զգալի տեղ են գրավել «հայ» կոչվող ցեղերը կամ «հայալեզու ցեղերը»։ Համոզիչ է այն, որ այդ ցեղամիության «Խաթե» անունից են առաջացել հայ ժողովրդի կողմից իրեն և իր երկրին տրվող «հայ» և «Հայ(ք)», «Հայ(աստան)» անվանումները (Հ=Հ, ate=այ)։ Խաթե ցեղամիության երկրները չկարողացան հասնել հզոր պետության աստիճանի։ Մելիդում առաջացած լուվիական թագավորությունը թույլ էր և կարճ կյանք ունեցավ։ Այն անկում ապրեց Ուրարտուի հարվածների տակ։ Նաիրի[85] ցեղամիությունը զբաղեցրել է Հայկական լեռնաշխարհի հյուսիսային և հյուսիս-արևմտյան տարածքները։ Այդ ցեղամիության բնակչության էթնիկական կազմի մասին խոսելիս ամենից առաջ պետք է հաշվի առնել այն գլխավոր փաստը, որ նրա բնակիչները, առանց որևէ հայտնի էթնիկական փոփոխություն կրելու, հետագայում հանդես են եկել Մեծ Հայքի կազմում՝ որպես հայերեն լեզու կրողներ։ Հավանաբար այդ ցեղամիության բնակչության ճնշող մեծամասնությունը, եթե չասենք, իհարկե, ամբողջ բնակչությունը, կազմել են «հայ» կոչվող ցեղերը կամ «հայալեզու» ցեղերը։ Այս

---

[82] Keilschrifturkunden aus Boghazkoi, Berlin, 1921—1975, XXXVI. 23, 4—24; XIX, 11; IV, 38—44; Keilschrifttexte aus Boghazkoi, Leipzig, 1923—1975, XIV, 23, 4—9; XIV, 22, 4—12; IV, 4; II, 16—24; IV, II, 67—75; III, 17—26; III, 57—72- IV, 4—41; IV, 42—55.

[83] Ուստի, այն կարծիքը, թե Հայասայի (Խայաշայի) անունից է առաջացել «հայ» անունը, չի հիմնավորվում։

[84] УКН № 39 (11), 127, II (5, 12, 15, 37), 128, A2 (22), 278 (4).

[85] KAH, I, № 17, 19 (11—17); O. Schroeder, Keilschrifttexte aus Assur historischen Inhalts, Band II, № 58—61, 71, 73; AKA, p. 63—71, col. IV, line 43—101; col V, line 1—32. p. 117; E. Weidner, Die Inschriften Tukulti-Ninurtas I, Craz, 1959, S. 30; C. F. Lehmann-Haupt, Materialen . . . . ., S. 15, 18; АВИИУ, № 3, 5—7, 8—13, 17.

ենթադրությունը հաստատվում է նաև այն փաստով, որ ուրարտական պետության վերելքի էտապում այդ ցեղամիության երկրները, նրանց բնակիչները Նաիրի ընդհանուր անվան փոխարեն արդեն հանդես են եկել «Խաթե» («Հայ») էթնոնիմի տակ, իրենց համարել «Խաթե» («Հայ») ցեղամիության անդամներ։ Այդպիսի երկրներից են, օրինակ՝ Ուիրամը, Պաիտերին, Ադաեին (հմմտ. «Խաթե» («Հայ») էթնոնիմի տակ հանդես եկող վերոհիշյալ Ուրմանի, Պիտեիրա, Ադանի բնակավայրերը)։ Նաիրի ցեղամիության երկրները չկարողացան հասնել հզոր պետության աստիճանի։ Դիաուխե երկրում առաջացած թագավորությունը թույլ էր և ոչ միասնական։ Այն սկզբից ճնշվեց Ասորեստանի կողմից, իսկ հետագայում էլ անկում ապրեց Ուրարտուի հարվածների տակ։ Էթիունի[86] ցեղամիությունը զբաղեցրել է Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան տարածքները։ Այդ ցեղամիության բնակչության էթնիկական պատկանելության հարցը առայժմ քիչ է որոշակի։ Միայն որոշակի է այն, որ այդ ցեղամիության բնակիչները այնպես, ինչպես Նաիրի ցեղամիության բնակիչները, առանց որոշակի հայտնի էթնիկական փոփոխություն կրելու հետագայում հանդես են եկել Մեծ Հայքի կազմում որպես «հայերեն լեզու» կրողներ, այսինքն՝ «հայեր»։ Այդ ցեղամիության տոպոնիմիկան և օնոմաստիկան հիմնականում ուներ հայկական կերպարանք[87] (օրինակ՝ Աբիլիանիխի-Աբեղեանք, Տուարածինիի խուբի-Տուարածատափ, Վելիքունի-Գեղաքունի, Մուլուկու-Մղուկ, Գիառնիանի-Գառնի, Ուրտեխինի-Արցախ, Մուրինուի (անձնանուն է) և այլն)։ Էթիունի ցեղամիության բնակիչներին չհաջողվեց հասնել պետության աստիճանի (այդ ուղղությամբ նրանց գործադրած ջանքերը զուր էին անցնում ուրարտական պետության ճնշումների պատճառով)։

Երբ ուրարտական պետությունը նվաճում է ամբողջ Հայկական լեռնաշխարհը, նրա էթնիկական կազմում տեղ են գրավում ինչպես Ուբուատրի ցեղամիության բնակիչները՝ ուրարտներր կամ արմիները և Շուբարի ցեղամիության բնակիչները՝ շուբարիները կամ խուրրիները, այնպես էլ Խաթե, Նաիրի և Էթիունի ցեղամիությունների բնակիչները՝ «հայերը» և նրանց հետ հանդես եկող խեթա-լուվիական ցեղերը։ Ուրարտական պետության էթնիկական կազմում մեծամասնությունն են կազմել Խաթե, Նաիրի և Էթիունի ցեղամիությունների գլխավոր բնակիչները՝ «հայերը» կամ «հայ» ցեղերը։ Ասսուրական վտանգի ճանապարհը փակելու նպատակով Ուրարտուն ձգտում է ստեղծել կենտրոնական պետություն։ Ակամայից առաջ է գալիս պետության մեջ գտնվող ցեղերի կոնսոլիդացման անհրաժեշտություն։ Սակայն դա ուղեկցվում է սուր հակասություններով։ Ուրարտական պետության գոյության ընթացքում առաջնությունը գտնվում է իշխանության գլուխ կանգնած ուրատների կամ արմիների ձեռքը։ Այդ երևույթը շարունակվում է նաև ուրարտական պետության անկումից հետո։ Բայց դա երկար չի տևում։ Այն շարունակվում է մինչև Դարեհ I-ը և Շամեշ-բարաքքուն (մ. թ. ա. 415 թ.)[88]։ Դրանից հետո շարունակվող կոնսոլիդացիան (որը նախատեսում էր՝ պարսկական լծից ազատվելու նպատակով ստեղծել միասնական ժողովուրդ, միասնական պետություն) ավարտվում է նրանով, որ երկրի բնակիչները այլևս անցյալի նման իրենք իրենց երկիրը չեն կոչում Բիայնիլի, իրենց էլ՝ բիայ-

---

[86] УКН, № 20 (лиц. стор. 15, 21, 31, обор. стор. 3, 7, 19), 38 (2), 127 (1—21, T1—25, V—34, 41, 47), 128 (A2—3, B1—28), 129a (3, 5), 130 (6), 131 (2), 155 (A—13, C—52), F—4, 5).

[87] О. О. Карагезян, Проблема этногенеза и самоназвания армянского народа по линописным источникам (ՀՍՍՀ ԳԱ Լրաբեր հասարակական գիտություններին. Երևան, 1988, № 7, էջ 57—76)։

[88] E. Unger, Urartu (Reallexikon der Vorgeschichte ed. M. Ebert, Band XIV, Berlin, 1928, S. 32).

նացիներ, որ համազոր էին Ուրարտու (հմմտ. Արմինա) և ուրարտներ (հմմտ. արմիներ) հասկացություններին, այլ սկսում են իրենք իրենց երկիրը կոչել նոր անունով՝ «Հայք» կամ «Հայաստան» և նոր անունով կոչել նաև իրենց՝ «հայ» կամ «հայեր»։ Այս երևույթը արդեն ցույց է տալիս, որ հետագա կոնսոլիդացիայի ընթացքում հաղթանակ են տարել «խաթե» ընդհանուր հասկացության տակ հանդես եկող «Հայ» ցեղերը։ Նրանք նույնպես եղել են Հայկական լեռնաշխարհի ամենահնագույն մայր ցեղերից մեկը, ինչպես ուրարտները կամ արմիները (արմենները)։ Հետագա ամբողջ դարաշրջաններում նրանք են իրենց ձեռքում պահում Հայկական լեռնաշխարհի էթնիկական դրոշը։

Ասսուրական պետության անկման փուլում և նրանից անմիջապես հետո Բաբելոնի տիրապետության տակ անցած Շուբրիա երկրում անկախ թագավորություն որոնելը, ինչպես փորձում են Արմե-Շուբրիա տեսության կողմնակիցները[89], անհիմն է։ Ոչ Ասարխադդոնի ժամանակ Սկայորդին, ոչ էլ ասսուրական պետության անկման շրջանում Պարույրը չեն թագավորել Շուբրիայում։ Դրան հակառակ, Հայկական լեռնաշխարհում ասսուրական պետության անկման ժամանակ և նրանից անմիջապես հետո գոյություն է ունեցել միայն մի պետություն և դա ուրարտների կամ արմիների (արմենների) պետությունն էր, այսինքն՝ Ուրարտու (Ուրաշտու) պետությունը կամ Արմինա (Արմենիա) պետությունը։ Այդ ժամանակ ավանդական պատմությունը (նկատի ունենք Քսենոֆոնի «Կյուրոպեդիան»[90] և Խորենացու «Հայոց պատմությունը»[91]) Հայկական լեռնաշխարհում հիշատակում է Արմենիա պետության, նրա Պարույր, «Երվանդի հայր», Երվանդ, Տիգրան թագավորների, իսկ սեպագիր[92] արձանագրությունները՝ Ուրարտու պետության, նրա Սարդուրի IV, Էրիմենա, Ռուսա III, Ռուսա IV թագավորների գոյության մասին։ Տարածքի և ժամանակաշրջանի իմաստով ավանդական պատմության Արմենիա պետությունը համապատասխանում է սեպագիր արձանագրությունների Ուրարտու պետությանը (այդ են հաստատում նաև Դարեհ I-ի Բեհիստունյան արձանագրության վերոհիշյալ տվյալները, որոնք ընդգծում են Ուրաշտուի և Արմինայի նույնությունը), իսկ ավանդական պատմության Արմենիա պետության Պարույր, «Երվանդի հայր», Երվանդ, Տիգրան թագավորները, բնականաբար, համապատասխանում են սեպագիր արձանագրությունների Ուրարտու պետության Սարդուրի IV, Էրիմենա, Ռուսա III, Ռուսա IV թագավորներին։ Սեպագիր արձանագրությունների հիշյալ թագավորները համապատասխանաբար եղել են ավանդական պատմության նշված թագավորների նախատիպերը։ Ուրարտու-Արմենիա (Ուրաշտու-Արմինա) պետությունը իր գոյությունը պահպանել է ընդհուպ Ռուսա IV-Տիգրանի ժամանակաշրջանը, որից հետո այն անկում է ապրել։

---

[89] Б. Б. Пиотровский, О происхождении армянского народа, Ереван, 1946, с. 21; И. М. Дьяконов, История Мидии, М.—Л., 1956, с. 313; *Ս. Տ. Երեմյան, Արմե-Շուպրիա թագավորությունը (Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, ՀԽՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1971, էջ 423—434)։*

[90] Xen. Cyrop. III (1, 33).

[91] *Խորենացի, I (21—22, 23—31)։*

[92] УКН, № 456—458, 458а, 459—460.

К ВОПРОСУ ОБ ИНТЕРПРЕТАЦИИ НАЗВАНИЯ ЭРЕБУНИ

Д. Н. САРКИСЯН

Резюме

Корень Er(e)b—название Ер(е)буни (^{URU}Er(e)buni) следует интерпретировать на основании урартского слова erbi или ebri «господин». Следовательно, Ер(е)буни (^{URU}Er(e)buni) в таком случае может означать (вместе с детерминативом URU «город» и с суффиксом—uni, образующим имя) «Господский город».

На основании вышесказаного можно полагать, что под Эребуни урарты подразумевали «царский город» (ср. URU LUGAL-nusi—урартских надписей)—одна из резиденций урартских правителей.

Урартский корень (er(e)b — «господин» по форме «ерев-» (er(e)v-) сохранился также в названии города Ереван, образовавшегося от названия Эребуни (в названии города Ереван конечное «-ан»-суффикс, образующий имя, который произошел от суффикса «-uni» слова ^{URU}Er(e)buni).

Упомянутый урартский суффикс «-uni» («уни»), образующий имя, сохранился также в раннеармянских названиях племен. Этот факт свидетельствует о связи армянских племен с урартским этническим миром (армены—коренные урарты или потомки племенного союза Уруатри, а хайи—хайоязычные жители племенных союзов Хате, Наири, Этиуни).

TO THE QUESTION ON INTERPRETATION OF THE NAME EREBUNI

D. N. SARKISIAN

Summary

The root Er(e)b-the name Er(e)buni (^{URU}Er(e)buni) has to be interpreted on the base of the Urartian word erbi or ebri "master". Therefore Er(e)buni (^{URU}Er(e)buni) in this case can mean (together with determinative URU "city" and with the suffix -uni, forming the name) "Master's city".

On the base of foresaid we can consider, that saying Erebuni inhabitants of Urartu meant "The king's city" (comp. URU LUGAL-nusi-of Urartian inscriptions)—one of residences of governers of Urartu.

Urartian root er(e)b-. "master" in the form of erev -(er(e)v-) was kept also in the name of the city Erevan, which was formed from the name Erebuni (in the name of the city Erevan the final „-an"-suffix, forming the name, which came from the suffix "uni" of the word ^{URU}Er(e)-buni.

Above-mentioned Urartian suffix "uni" (-ouni), forming the name, was kept also in early Armenian names of tribes. This fact testifies about the connections of Armenian tribes with Urartu ethnic world (armens-are native urartians or descendants of tribe union of Uruatri, and hajs-the inhabitants of tribe unions of Hate, Nairi, Etiuni).